Սիպիլ

Հնչյակ

Տեսած եք ամպն որ կը սուրա հյուսիսեն
Աներևույթ հաղթ ուժե մը մրրկած.
Ի՛նչ պայքարներ իր ընգերքը կը հուզեն.
Իր ծոցին մեջ՝ ի՞նչ փայլակներ, բոց ու կայծ:

Կը կոծկոծի, կը գալարվի, կը գոռա,
Ամպրոպներում հորձանքներ դուրս կըժայթին.
Հետո հեղեղ մը կը զեղու մեր վըրա,
Քայքայելով փխրուն երազն իր կյանքին:

Անհունություն մը կա իմ մեջս անծանոթ,
Որուն հոգվույս նեղ պատյանը չի բավեր.
Կը բեկբեկի, կը ճմլվի, կ՝այրունի,

Կը փշրվի, ինչպես ամպե նուրբ անոթ,
Իր մեջ մըղված խեռ պայքարեն կարեվեր.
Բայց այդ ահեղ մրրիկներուն պետք ունի:

1913